ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«29» ՀՈՒՆՎԱՐԻ 2019թ. գ. Ամբերդ

Հարգելի Ամբերդ Համայնքի բնակիչներ այսօրվա համայնքի ժողովում ես ձեզ կներկայացնեմ 2018 թվականի ընթացքում կատարված աշխատանքների մասին: Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի մասին տեղեկություններ և կխոսեմ համայնքում առկա հիմնախնդիրների մասին: Վերջում կլինի հարց ու պատասխան : Այժմ ես հերթով կզեկուցեմ թե, որ բնագավառում ինչ է կատավել և ինչ պետք է կատարվի:

1. Ֆինանսների բնագավառ

Համայնքում 2018 թվականի ընթացքում հավաքագրվել է ընդհամենը 32570.5 հազար դրամ գումար , որը կազմում է 2018 թվականի կատարողականի 79.5 % -ը որից

ա/ Գյուղնշանակության հողի հարկ հավաքագրվել է 1173.1 հազար դրամ
բ/ Գույքահարկ հավաքագրվել է 2365.6 հազար դրամ
գ/ Վարձակալական հողի հարկ հավաքագրվել է 9.6 հազար դրամ
դ/ Պետության կողմից դոտացյա 27654.6 հազար դրամ
ե/ Տեղական տուրք 70.0 հազար դրամ
զ/ Այլ ոչ հարկային գումարներ 138.8 հազար դրամ
է/ Ինքնակամ կառույցի օրինականացման վճար 42.9 հազար դրամ
ը/ Աղբահանություն 605.4 հազար դրամ
թ/ Այլ գույքի վարձակալության վճար 37.6 հազար դրամ
ժ/ Հողի օտարում 473.0 հազար դրամ

Համայնքում սեփական եկամուտների % -ը կազմում է 34.1 %: Համայնքում կատարված է համայնքի բյուջեի հաշվին հետևյալ աշխատանքները :

Համայնքի անապահով ընտանիքներին տրամադրվել է սոցիալական օգնություններ: Կատարվել է համայնքի փողոցների գիշերային լուսավորության աշխատանքներ, որի արդյունքում լուսավորվել է համայնքի փողոցների 90 %-ը: Կատարվել է գերեզմանատուն տանող փողոցի ասֆալտե նորոգում: Ապրիլի 24-ին կազմակերպվել է միջոցառում նվիրված հայոց մեծ եղեռնի և մայիսի 9-ին կազմակերպվել է միջոցառում հայրենական մեծ պատերազմի հաղթանակի և Արցախյան պատերազմի հաղթանակի օրվա առթիվ: Մեպտեմբերի 1-ին դասընթաց առաջին դասարանցիներին համայնքապետարանի կողմից տրվել է պայուսակ և գրենական պիտույքներ: 2018 թվականի ընթացքում տեի է ունեցել միջոցառումներ, որի ընթացքում կատարվել է հյուրասիրություն համայնքի բնակչությանը և հյուրերին:Կատարվել է Մշակույթի տան մասնակի վերանորոգում:

1.Հասարակական կարգի պահպանում

Ես որպես համայնքի ղեկավար շատ կարևոր եմ համարում հասարակական կարգի պահպանությունը : Համայնքի բնակիչներից շնորհակալություն եմ հայտնում հասարակական

կարգը պահպանելու համար: Համայնքում չկան այնպիսի բնակիչներ որոնք խանգարեն բնականոն կյանքը ավելին բնակիչները իրենք են ամեն ինչ անում որպիսի համայնքում ոչ մի արտառոց բան չկատարվի:

2. Պաշտպանության բնագավառում

Իմ առաջին նախապայմանն այն է որ, համայնքում իշխի հայրենասիրությունը: Վերջապես բոլորս ապրում ենք Հայաստան աշխարհում , որը մեր բոլորիս տունն է: Հայրենիքի պաշտպանության համար սիրով պետք է կատարենք մեր պարտականությունները, այլապես ազգը, որ գոյատեվել է դարեր շարունակ կկործանենք, որի իրավունքը մենք չունենք : Մեր պապերից փոխանցված երկիրը մենք պետք է զարգացնենք: Բանակը պետք է ուժեղացնենք, պաշտպանության հիմնաքարը ամուր դնենք և հետո փոխանցենք մեր սերունդներին: Այսօր համայնքում կան զորակոչից խուսափոխ թվով 16 զինակոչիկ, որոնք գտնվում են արտ. երկրներում, մի մասը արդեն իսկ այնտեղի քաղաքացիներ են դարձել, իսկ այժմյան սերունդը բանակից չի խուսափում: Հարկավոր է բոլորս միասին պայքարենք և տվյալ երիտասարդներին հետ բերենք և ուղարկենք ծառայության: Մեր համայնքի համար ուղակի ամոթ է զորակոչից խուսափելը:

3. Քաղաքաշինության բնագավառ

Հարգելի համայնքի բնակիչներ, քաղաքաշինության բնագավառում ես կասեի, մենք շատ թերացումներ ունենք: Համայնքում կան տներ, որոնց սեսմակայունությունը ապահովված չէ, մարդը տունը կառուցում է առանց հաշվի առնելու նախագծող կազմակերպության կարծիքը: Կան շենքեր որոնց մի մասը չեն դիմանա 3-ից 4 բալանոց երկրաշարժից: Եվ ես որպես համայնքի ղեկավար զգալով վտանգը զգուշացնում եմ բոլոր բնակչությանը շինարարությունը կատարելուց առաջ, ձեր իսկ անվտանգությունը ապահովելու համար հարկավոր է բնակելի տան հատակագիծ, որը գծագրված կլինի նախագծող կազմակերպության կողմից: Համայնքը չի կարող տալ թույլտվությանայն անձանց ովքեր չունեն շենքը կառուցելու նախագիծ այդ, իսկ պատճառով հարկավոր էկատարել բոլոր փաստաթղթային աշխատանքները հակառակ դեպքում օրենքով սահմանված կարգով կկասեցվի շինարարության աշխատանքները և տվյալ անձինք կենթարկվեն պատասխանատվության: Համայնքում բնակիչները արդեն հասկացել են որ պիտի շինարարություն անելուց առաջ հանեն համապատասխան շինարարության թույլտվություն:

4. Հողօգտագործման բնագավառ

Համայնքի ընդհանուր վարչական սահմանները՝

1. Վարելահող 188.17 հա
2. Խաղողի այգի 77.19 հա
3. Պտղատուայգի 19.34 հա
4. Այլ հողեր 44.8
5. Տնամերձ հողամասեր 74.66 հա
6. Հասարակական կառուցապատման 2.1 հա
7. Ընդհանուր օգտագործման 14.37 հա
8. Այլ հողեր 4.98 հա
9. Արդյունաբերական 5.72 հա
10. Էներգետիկայի և տրանսպորտի 1.86 հա

11. Հատուկ պահպանվող տարածքներ 5.24 հա
12. Ջրային հողեր 13.87 հա
Ընդամենը 452.3 հա

Ամբերդ համայնքի հողերը գտնվում են երկու գոտիներում՝ ՈՒրց-Կոտայք Շամիրամ և Մերձ-Արաքսյան: Համայնքի հիմնական եկամուտները ապահովում են հողի հարկից և գույքահարկից, որոնք տրված է համայնքի բնակիչներին սեփականության հիմունքներով կամ վարձակալությամբ:

5. Տրանսպորտի բնագավառ

Կառուցապատված է համայնք մտնող գլխավոր ճանապարհը: Գրեթե ամեն տարի կատարում ենք հողալցումներ համայնքի ներսի և հանդամիջյան ճանապարհներում: Այս տարի համայնքի բյուջեով և քառամյա ծրագրով նախատեսված էր փողոցների փոսալցումներ, սակայն գումարների թերի հավաքագրման պատճառով ծրագիրը, որը ներառված էր 2018 թվականի բյուջեով չկատարվեց:

6. 2018 թվականի բյուջե

2018 թվականի բյուջեում նախատեսված էր հետևյալ աշխատանքները.

1. Տեղական ինքնակառավարում /համայնքապետարան/ 25860.9 հազար դրամ
2. Մշակույթ միացյալ տնօրինություն 5200.0 հազար դրամ
3. Աղբահանություն 1450.0 հազար դրամ
4. Սպորտ ծառայություն 1080.0 հազար դրամ
5. Սոցիալական օգնություն 2000.0 հազար դրամ
6. Այլ մշակույթային կազմակերպություն 1936.4 հազար դրամ
7. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն 2028.0 հազար դրամ
8. Ընդհանուր բնույթի այլ ծառայություն 28.8 հազար դրամ
9. Արտաքին լուսավորություն 2201.5 հազար դրամ
10. Անասնաբույժ 200.0 հազար դրամ
11. Ասֆալտապատում 250.0 հազար դրամ

7. Գյուղատնտեսության բնագավառ

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ կատարվել է ընտանի կենդանիների հաշվառում, որի արդյունքները հետևյալն են՝

8. Խոշոր եղջերավոր անասուններ 376 որից՝
ա/ կովեր 113
բ/ երինջներ 1-ից 2 տարեկան 46
գ/ երինջներ 2-ից բարձր 37
դ/ այլ սեռատարիքային 180
9. խոզեր 158 որից՝
ա/ մայրեր 21
բ/ 4-ից 12 ամսեկան 42
10. հավեր 1876 որից ածան հավեր
ա/ 1595

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ճանապարհների նորոգում
2. Ակումբի շենքի մասնակի վերանորոգում
3. Ոռոգման ցանցի վերանորոգում
4. Գազաֆիկացման աշխատանքներ նոր փողոցներում
5. Լուսավորության աշխատանքներ

Համայնքի ղեկավար՝ Մ. Բաբայան